

Տեղեկատվական քաղաքակրթությունը և նոր սոցիոմշակութային ավանդույթները

Տեղեկատվական քաղաքակրթության ձևավորումը բարդ և հակասական սոցիալ-պատմական գործընթաց է: Այն սկսել է ձևավորվել 20-րդ դարի 2-րդ կեսերին, այն ժամանակ, երբ մարդկության պատմության մեջ առաջին անգամ կատարվեց տեղեկատվական <<պայթյուն>> և որակապես փոխվեց տեղեկատվական հոսքերի դերն ու նշանակությունը: Նման տեղեկատվական հոսքերին տիրապետելու և դրանք պահպանելու և օգտագործելու համար անհրաժեշտ էին հատուկ միջոցներ: Ըստ Է.Թոֆլերի, քաղաքակրթությունը անցնելով զարգացման ագրարային և արդյունաբերական ալիքները այժմ կանգնած է տեղեկատվական հեղափոխության շեմին:¹ Մասնագիտական գրականության մեջ այս նոր փուլը բնութագրվում է նաև հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն, որի հիմնական առանձնահատկությունն այն է, որ մարդու կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաները որոշիչ դեր են խաղում: Սոցիումի զարգացման երեք փուլերի հիման վրա տեղեկատվական հասարակության տեսաբանները /Դ.Բելլ, Է.Թոֆլեր, Ա.Թուրեն և այլն/ առանձնացնում են հասարակության երեք հիմնական տիպեր՝ մինչարդյունաբերական, որի հիմքում ընկած են մարդ-բնություն փոխհարաբերությունները, արդյունաբերականը՝ որի հիմքում մարդ-վերափոխված բնությունն է, հետարդյունաբերականը՝ որի հիմքում մարդկային փոխհարաբերություններն են: Անշուշտ այս տիպերի մեջ կա ժառանգական կապ, քանի որ դրանք պատմամշակութային տեղաշարժերի արդյունքն են և արտահայտում են ստեղծված սոցիոմշակութային իրականության էությունը: Տեղեկատվական հասարակության մեջ ինֆորմացիան դառնում է գերակշռող արժեք և ռազմավարական ռեսուրս, քանի որ դրա ստեղծումը, մշակումը և փոխանցումը հանդես է գալիս, որպես արտադրողականության և իշխանության

¹ Տե՛ս **Тоффлер Э.** Метаморфозы власти. М., АСТ, 2001, էջ22:

որոշիչ աղբյուր: <<Տեղեկատվության աճի և իմացության հետ զուգահեռ աճում է զանգվածների տեղեկատվական և սոցիոմշակութային մարզինալացումը, դրանց նախկին գործընթացները դառնում են հնացած>>²:

Հասարակության զարգացման բոլոր բեկումային պահերը կապված են կուտակված տեղեկատվության փոխանակման նոր եղանակների և միջոցների առաջացման, տեղեկատվական դաշտերի ընդլայնման և դրանց մեխանիզմների փոփոխության հետ, ինչի արդյունքում փոխվում է նաև տեղեկատվության ընկալման սոցիոմշակութային համակարգը: Աշխարհի պատկերը ստեղծվում է կուտակվող տեղեկատվության համակարգման և կանոնակարգման արդյունքում: Ուրեմն տեղեկատվությունը հանդես է գալիս որպես հասարակական զարգացումը կառավարող կարևոր գործոն, իսկ նրա դերը հասարակության զարգացման հարցում պայմանավորված է մարդու տեղեկատվական պահանջով:

Տեղեկատվական հասարակության հիմնական առանձնահատկությունն այն է, որ բնակչության մեծ մասը զբաղված է տեղեկատվական գործունեությամբ: Տեղեկատվությունը դառնում է արտադրության հիմնական արդյունքներից և սոցիալական գլխավոր արժեքներից մեկը և դառնում հասարակական հարաբերությունների միավորման հիմնական գործոնը: Տեղեկատվական հասարակության յուրահատկությունն այն է, որ աճում է անհատական աշխատանքի տեսակարար կշիռը: Համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս տանից դուրս չգալով մասնակից դառնալ հասարակական արտադրությանը: Նոր տեղեկատվական տեխնոլոգիաներն ու աշխատատեխնիկական համակարգերը հիմնովին փոխում են աշխատանքի բնույթն ու նրա կազմակերպման եղանակը, փոխվում է նաև հասարակության արժեհամակարգը, համակեցության ձևը և կյանքի կազմակերպման ու

² Տե՛ս **Рашковский Е.Б.** Многозначный феномен идентичности: архаика, модерн, постмодерн...”Вопросы философии, М., Наука, 2011, № 6, էջ 36:

կանոնակարգման եղանակը: Ավելին, այդ ամենի հետևանքով փոխվում է նաև մարդը: Նա այսօր ոչ այնքան էկզիստենցիալ էակ է, որքան սպառողական հոգեբանությամբ ապրող <<ամբոխի մարդ>> և մեքենայի կցորդ: Տեղեկատվական հասարակության յուրահատկությունները մեկն էլ այն է, որ տեղեկատվությունը դառնում է արտադրության գլխավոր արտադրանքը և հիմնական արդյունքը: Պատահական չէ, որ հետարդյունաբերական հասարակություններում քաղաքականության մեջ աստիճանաբար գերիշխող դեր է գրավում տեղեկատվական ընտրանին, իսկ սոցիալական կառուցվածքում՝ տեղեկատվական մշակույթի հիմնական կրողը՝ զանգվածը: Ընդ որում երկու դեպքում էլ << վարքի կարգավորման ու գործառնության հիմնական սկզբունքը սիներգետիկական ռացիոնալությունն է>>³: Փոխվում են ոչ միայն գոյության պայմանները, փոխվում է ինքը՝ միջավայրը, քանի որ ձևավորվում է գոյության համար բոլորովին նոր՝ վիրտուալ հարթություն:<<Փոխվում է քաղաքական մշակույթը, վարքագծի սոցիալ-մշակութային ձևերի կարծրատիպերը, ինչի արդյունքում կազմավորվում են վարքի նոր ձևեր>>⁴:

Փաստորեն տեխնոժին քաղաքակրթությունը ձևավորում է նոր տիպի մարդ, որը կարող է հեշտությամբ փոխել իր կոորպորատիվ կապերը, մարդկանց հետ հարաբերությունները և ընդգրկվել այլ սոցիալական հանրույթի ու այլ մշակութային կեցության մեջ: Այս հանգամանքը վկայում է, որ տեղեկատվական քաղաքակրթությունը նպաստում է նաև կյանքի փոփոխվող պայմաններին առավել հեշտ հարմարվող, անհատական նախաձեռնությամբ օժտված, տեղեկացված մարդու տեսակ, որը առանց ներքին կոնֆլիկտների ու բարդույթների հեշտությամբ հաղթահարում է ժամանակի և տարածության արգելքները: Սակայն իրավիճակը բարդանում է նրանով, որ ստեղծված սոցիոմշակութային դաշտը ենթադրում է այդ դաշտում հայտնվող բոլոր տարրերի բացարձակ հավասարություն, ինչը նշանակում

³ Տե՛ս **Угреневич Е.А.** Новейший философский словарь //Информационное общество, Минск, 1999, էջ 274:

⁴ Տե՛ս **Садков Е.В.** Маргинальность и приступность.Социологические исследование, М., 2000, № 4, էջ 46:

է, որ արդէն գոյություն չունեն բացարձակ հեղինակություններ, որոնք խանգարում են մյուս տարրերին ինչ-որ կերպ կամ լիարժեք դրսևորվելու: Ինտերնետում բոլորը հավասար են և հասանելի: << Համաշխարհային սարդոստայնը, չկրկնելով աշխարհի պատկերը և չվերածվելով իր մեջ պարունակվող անվանումների յուրատեսակ աշխարհագրական քարտեզի, ստեղծում է <<աշխարհապատկեր>>, որը ստեղծում է նոր տարածություն նոր՝ վիրտուալ տիպի կյանքի համար>>⁵: Նոր տեղեկատվական-հաղորդակցական համակարգը արմատականորեն կերպափոխում է տարածությունն ու ժամանակը, մարդկային կյանքի հիմնական չափորոշիչները: <<Տարածությունը գրկվում է իր մշակութային, պատմական, աշխարհագրական նշանակությունից, իսկ ժամանակն էլ մաքրագործվում է նոր հաղորդակցական համակարգի մեջ /անցյալը, ներկան և ապագան հնարավոր է դառնում ծրագրավորել այնպես, որ դրանք փոխներգործեն միմյանց վրա միևնույն հաղորդամաք/>>⁶:

Ժամանակակից մարդու սոցիալ-դերային հարստացումը, ժամանակատարածային ընդլայնումը և ներքին փորձը ունեն բազմաթիվ շփման նոր հնարավորություններ հասարակական գործընթացների զարգացման մեջ: <<Սակայն չպետք է մոռանալ, որ ժամանակակից մարդու ինքնորոշումն ու ինքնակառավարումը հենվում է նախորդ սերնդի ժառանգության վրա, մարդկային հոգու նույն նախադրյալների վրա>>⁷: Խնդիր է առաջանում նոր սերնդի գիտակցությունը ձևավորել այնպես, որ այն ի վիճակի լինի լուծելու երկու հիմնական խնդիր.առաջինը՝ հեշտ աղապատացվի միջավայրին և երկրորդ՝ պահպանի և հաղորդի իրենից հետո եկող սերնդին իրեն հանձնված և սերնդե-սերունդ փոխանցված փորձը: Միևնույն ժամանակ կուտակված փորձը պետք է այնպես հաղորդել, որ այն հնարավոր լինի ճիշտ օգտագործել: Այս դեպքում սոցիալական բարդ ու շարժուն

⁵ Տե՛ս **Маньковская Н.Б.** Эстетика постмодернизма. СПб. Алетейя. 2000. էջ 307.

⁶⁶ Տե՛ս **Кастельс М.** Информационная эпоха: экономика, общество и культура, http://polbu.ru/kastels_informepoch/

⁷ Տե՛ս **Гудков Л.Д.** Русский неотрадиционализм и сопративление переменам// Отечественные записки. М.2002, № 3, էջ 4:

ցանցում ձևավորվում են միասնական գործունեության եղանակները, որոնք նոր սոցիոմշակութային ավանդույթների ստեղծման հիմք են հանդիսանում: Մշակութային զարգացման դինամիկան պայմանավորված է ավանդույթի և ինովացիայի փոխգործության բնույթով, ինչը դարձյալ ապացուցում է, որ մշակութային զարգացման հիմքում ընկած են տեղեկատվական գործընթացներ՝ տեղեկատվության առաջացումը, տարածումը, յուրացումը, փոխանցումը և պահպանումը: Տեղեկատվայնացումը նոր կենսակերպ է, որը բերել է ոչ միայն տեղեկատվության ծավալի մեծացմանը, գլոբալ ցանցերի և համակարգերի, տվյալների բազաների ստեղծմանը, այլև **նոր մշակույթի** ձևավորմանը:

Տեխնիկական բաղադրամասը ժամանակակից մշակույթում հատուկ տեղ է զբաղեցնում, իսկ մարդու տեխնիկայի հետ փոխազդեցության խնդիրը ձեռք է բերում յուրահատուկ այժմեականություն, քանի որ սոցիոմշակութային փորձի փոխանցման հարցերում տեխնիկան երկրորդականից դառնում է գլխավոր: Ժամանակակից մշակույթում հումանիտար և գիտատեխնիկական բաղադրիչների հարաբերակցությունը դժվարությամբ է պահպանում հավասարակշռության եզրը: Տեխնիկան որպես ժամանակակից զարգացած հասարակությունում մարդու շրջակա միջավայրի անբաժանելի մաս , կոչված է ընդլայնելու նրա հնարավորությունները նյութական և հոգևոր արտադարության գործընթացում: Սակայն մարդը դառնում է տեխնիկական համակարգերի սպառման արդյունք, որոնց սպասարկման համար նա ծախսում է իր մտավոր և ֆիզիկական էներգիան: Նույնիսկ, եթե ուշադրություն չդարձնենք հաղորդակցական ցանցերին և մարդու վարքի և վիճակի դեկավարման համար ռեալ գոյություն ունեցող հատուկ տեխնիկական համակարգերին՝ սահմանափակվելով հարաբերականորեն պարզ համակարգչային համակարգերի դիտարկումով, կարելի է անվիճելիորեն ընդունել տեխնիկայի՝ մարդու մշակույթի վրա ազդեցության փաստը, նրա մտածելակերպի և աշխարհի գեղարվեստական, գեղագիտական ընկալման և, հետևաբար, ավանդական մշակութային գործընթացների փոփոխության վրա ազդեցությունը:

Տեղեկատվական հասարակության գլխավոր նպատակներից մեկը դառնում է նոր սոցիումը արտահայտող համապատասխան կատեգորիաների ու դրույթների մշակումը և աշխարհայացքային բնույթ կրող փոփոխությունների ուսումնասիրությունը: Ինչպես նշում է Է.Թոֆլերը << Մեր կյանքում նոր տիպի քաղաքակրթություն է ծնվում, և կույր մարդիկ ամենուրեք փորձում են այն անտեսել: Այդ նոր քաղաքակրթությունը իր հետ բերում է ընտանեկան կյանքի նոր ոճ, փոխվում են ճանապարհները, որոնցով մենք քայլում ենք կյանքում, նոր տնտեսություն, նոր քաղաքական կոնֆլիկտներ են առաջանում, և դրանից բացի, փոփոխություն է կրում նաև ամբողջ գիտակցությունը>>⁸: Խոսքը գնում է մարդու վրա տեխնիկայի ազդեցության նոր ձևերի հայտնվելու մասին, որոնք իրենց ազդեցությամբ նոր փոփոխություններ են առաջ բերում անհատի գիտակցության մեջ: <<Տեղեկատվական միջոցները մեկուսացնում են մարդկանց, դուրս են մղվում ավանդական անմիջական շփումները, հանդիպումներն ու հավաքները, որոնք փոխարինվում են համակարգչով: Մարդը իրականությունը պատկերացնում է ոչ թե անձնական ընկալումներով, այլ տեղեկատվական միջոցներով ձևավորված իրականությանը համապատասխան>>⁹: Այս առումով տեղեկատվական տեխնոլոգիաները կատարում են սոցիալական նորմերի ամրապնդման և պահպանման գործառույթ, հաղորդակցական գործառույթ, արտաքին միջավայրին հարմարվելու գործառույթ, ինչպես նաև սոցիալական հիշողության գործառույթ:

Անհատի գոյությունը բարձր տեխնոլոգիաների հասարակության մեջ հնարավոր է դառնում միայն անցյալի արժեհամակարգը փոխելով , նորացնելով և միաժամանակ պահպանելով սոցիումալոգիային հիմնական տարրերը, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ: Մի կողմից տեղեկատվությունը ձևավորում է մարդու կյանքի նյութական միջավայրը՝ հանդես գալով տեխնոլոգիաների, ծրագրերի և այլնի դերում, մյուս կողմից՝ ներանձնային փոխհարաբերությունների հիմնական

⁸ Տե՛ս **Тоффлер Э.** Третья волна. М. , АСТ,1999, էջ 26:

⁹ Տե՛ս **Мотрошилова Н.В.** Цивилизация и варварство в эпоху глобальных кризисов. М., Канон,2012, էջ 264:

միջոց: Այսինքն՝ տեղեկատվությունը միաժամանակ որոշում է մարդու կեցությունը և սոցիոմշակութային կյանքը: Դարի հիմնախնդիր է դառնում մարդաբանական ճգնաժամը: «Այսօր չկա որևէ սահմանում, թե ինչպիսին պետք է լինի նորմալ մարդը, ինչպիսի որակներով պետք է օժտված լինի»¹⁰: Իսպանացի փիլիսոփա Խոսե Օրտեգա-Ի-Գասսետը տեխնիկական զարգացածության հետ է կապում հասարակության մասսայական գործընթացների դեստրուկտիվ փոփոխությունները: Քաղաքակրթության խորքից վեր են բարձրանում հոգևոր ու մշակութային աղբյուրները: Մարդը կորցնում է իր անհատականությունը: «Անգամ ժամանակակից գիտությունը սկսում են կերտել միջնորդ մարդիկ: Այս համահարթեցումը հանգեցնում է նրան, որ «միջակ մարդիկ» ներթափանցում են կյանքի բոլոր ոլորտները և փորձում իշխել այնտեղ»¹¹:

«Մարդու էությունը կարող է բացահայտվել ինչպես կենցաղում, այնպես էլ ստեղծագործության մեջ, միևնույն ժամանակ այդ բացահայտումը չպետք է տեղի ունենա նոր ժամանակների չափանիշներով, այլ սեփական էության չափանիշներով: Այդպիսի մարդու կյանքի նպատակը ինքնապահպանումը և իր ձևով կյանքը ապրելը չէ, ավելի շուտ ընդհակառակը, նա ընդունում է իրերն ու երևույթները այնպես, ինչպես թելադրում է մեքենայական արտադրությունը, և որպես կանոն, դա նրա համար ճիշտ է և բնական»¹²: Այս տեսության համաձայն մարդը կորցնում է միջնորդավորված հարաբերությունները ինչպես բնության, այնպես էլ մարդկանց հետ: Առաջանում է զգայական ընկալման, շփման և ըմբռնման պակաս: Մեր օրերում կարելի է ասել, որ մասսայական մշակույթը փորձում է լրացնել այդ պակասը/օրինակ՝ հնարավոր այնպիսի խաղերի ստեղծումը, երբ ամբողջ աշխարհի անսահմանափակ խաղացողներ միաժամանակ խաղում են նույն խաղը/: Մակայն այս ամենը տանում է հոգևոր կորստի: Այդ պատճառով, հատկապես, մեծանում է հետաքրքրությունները ավանդույթների հանդեպ: Հետ վերադարձը ավանդույթներին,

¹⁰ Տե՛ս **Сидорина Т.Ю.** Философия кризиса. М., Флинта-Наука, 2003, էջ 376:

¹¹ Տե՛ս **Ортега-и-Гассет Х.** Избранные труды: Восстание масс. М., Весь Мир, 2000, էջ 123:

¹² Տե՛ս **Гвардини Р.** Конец Нового времени //Вопросы философии. М.,Наука, 1990, № 4, էջ 145:

նշանակում է հետ վերադարձնել հիմնական արժեքները, որոնք գոյատևել են մարդկության պատմության ողջ ընթացքում: <<Ակնհայտ է, որ մարդկությունը <<հոգնել է գիտելիքներից>> և հետագա զարգացումը կարող է տեղի ունենալ հաշվի առնելով ավանդույթների մարդաբանական գործոնը: Եվ խոսքը պետք է գնա ոչ թե անցյալի պահպանողականության մասին, այլ նպատակների իրագործման: Պետք է հաշվի առնել, որ այսօրը անցյալի շարունակությունն է>>¹³, իսկ ավանդույթները ոչ թե պարզապես կենցաղային կամ տնտեսական իստիտուտներ են, այլ ինտեգրման համըդհանուր մեխանիզմներ, որոնք կարգավորում են հասարակության կյանքը:

¹³ Ст' у Сидорина Т.Ю. Амбивалентность рациональности//Философия кризиса. М., Флинта-Наука,2003, էջ 443:

